ազնեկարմրադոյն աստղատր: Դեբորայի՛ն է երգը.

Հասին թագաւորք եւ ճակատեցան,
Յայնժամ պատերազմեցան թագաւորք Քանանացւոց
Ի Թանաք ի վերայ ջրոց Մակեդդովայ.
Զագահութիւն արծաթոյ եւ ոչ առին,
Յերկնից ճակատեցան աստեղք յիւրաքանչիւր յօրինուածոյ.
Ետուն պատերազմ ընդ Սիսարայ:
Հեղեղատն Կիսոնի մերժեաց զնոսա,
Հեղեղատն Կադեմիմայ, հեղեղատն Կիսոնի:

Գեդէոն, Բարակէն նուազ բախտաւոր, չունեցաւ երգիչ Դեբորայ մը, որ երգէր Մադիանացիներու դէմ իր քաջագործութիւնները. բայց իրեն վկայ կը մնայ տակաւին Արադի աղբիւրը: Հո՛ն Աստուած զատեց այն երեք հարիւր քաջերը, որ մասնակցեցան իր ռազմական հնարքներուն և յաղթանակին. «Եւ եղև թիւ ամենեցուն՝ որ լակեցին ձեռամբ և լեզուով իւրեանց՝ երեք հարիւր այր. և մնացորդք ժողովրդեանն անկան ի վերայ ծնկաց իւրեանց ըմպել ջուր»: Արադի աղբիւրը կը կոչուի այսօր Այն Ճալուտ, չորս քիլոմէթր դէպ արևելք Զէրայինէն կամ Յեզրայէլէն և ծնունդ կուտայ Յորդանան թափող գըլխաւոր գետակներէն մէկուն:

Յեզրայէլ պէտք չէր անց գրաւեր հոս, եթէ այդ քաղաքը չյիշեցնէր Աքաաբի ու Յեզաբելի չարագործութիւնները ու այն պատուհասը, որով պատժուեցան: Յեզրայէլ կը յիշեցնէ նաև Եղիայի աղօթքով ամբողջ երեք տարի երկինքի փակուիլը, աղբիւրներու ցամքիլը ու բռնադատ երկրին վրայ տիրող երաշտն ու սովահարումը, մինչև այն օրը, ուր, դարձեալ Եղիայի աղօթքով, Աստուած վերջ տուաւ պատուհասին: Չէ՞ք կարծեր տեսնել՝ Կարմեղոսի գագաթին վրայ կանգնած՝ Բահաղի քուրմերուն այս ահաբեկիչը, որ երկինքը կը բանէ ուշադրութեամբ ու կ'երկարաձգէ աղօթքը, մինչև որ, վերջապէս, ծովին վերև կը տեսնուի ամպի ծուէն մը «իբրև զթաթ առն»՝ աւետաբերը անձրևին: Եղիա լուր կը դրկէ անմիջապէս Աքաաբին. «Լծէ՛ կառքդ ու իջի՛ր, զուցէ անձրևէն բռնուիս», ու ինք, Աստուծոյ հրամանով, Աքաաբի կառքին առջևէն կը վազէ մինչև Յեզրայէլի դուռը: Եւ ահա՛ կը մթագնին երկինքը ամպով եւ հովով ու կը սկսի տեղատարափը՝ դաշտը ողողելու աստիճան:

Դարձեալ պատերազմի յիշատակներ կ'արթնցնեն՝ թէ՛ Սեփորիի ջուրերը, Նազարէթի մօտ կողմը, որոնց մօտ 1187ին բանակած էր Խաչակիրներու զօրքը, Սալահէտտինի յարձակման նախօրեակին, և թէ՛ Կրեսոնի աղբիւրը, Կանայի մօտ, ուր քրիստոնեայ բանակի յառաջապահները, կռուելով մէկը տասի դէմ, բնաջնջուեցան Սարակինոսներու յառաջապահներէն: Ոչ մէկ աղբիւր, աւա՛ղ, չգտնուեցաւ Գուրուն—Հաթթինի այդ բարձունքներուն վրայ, որ հանդիսատես եղաւ այս վճռական ճակատամարտին: Աղբիւրի մը ներկայութիւնը թերևս փրկէր Գուիտոն Լուսինեանի զօրագունդերը, որոնք արևէն, խամսինէն և ջուրի պակասութենէն պարտասելէ ետք պարտուեցան Սալահէտտինէն: Այսպէս Գալիլեայի ջուրերը հանդիսատես եղած են ողբերգական կամ ռազմական պայքարներու:

Այս գաւառը թէև չունի Յակոբի Ջրհորը, բայց ունի իր Գենեսարէթի լիճը, որուն ջուրերը, աւելի հնազանդ Յորդանանի ջուրերէն, խաղաղեցան Յիսուսի հրամանով, հանդիսաւոր եղան հրաշալի ձկնորսութեան ու իրենց կոհակներուն մէջ ամփոփեցին յաւիտենական կեանքի խօսքերը, որոնք արձագանգած էին անգամ մը Յակոբի Ջրհորին վերև: Գալիլիա ունի նաև Կանայի աղբիւրը, որուն ջուրը գինիի փոխուեցաւ Յիսուսի հրամանով:

Բայց Գալիլեայի նուիրական հմայք մը տալու բաւական պիտի ըլլար միայն «Սուրբ Կոյսի աղբիւր»ը, Նազարէթի այդ անմահ գոհարը: Թէև չկայ եղելութիւն մը որ Կոյսի անունը ցմիշտ կապէր Նազարէթի այս միակ աղբիւրին. պատմական արժէքէ զուրկ է նաև այն աւանդութիւնը, որ հոն կը զետեղէ Գաբրիէլ հրեշտակապետի ու Մարիամի առաջին հանդիպումը: Սակայն չէ՞ բաւեր սա իրականութիւնը՝ թէ Մարիամ, նման իր համաքաղաքացիներուն, ամէն օր, առանձին կամ Մանուկին հետ միասին, կ'երթար ջուր բերելու այդ աղբիւրէն:

Նեեման իրաւունք ունէր հպարտանալու Աբանայով ու Փարփարայով, որոնք Դամասկոսը «Անապատի Մարգարիտ»ը ըրած էին: Սակայն միթէ Դամասկոսի բոլոր գետերը կը հաւասարի՞ն այս միակ աղբիւրին, դէպի ուր Նազարէթցի համեստ ու չքնաղ աղջիկ մը դիմելը տեսնելով՝ կարելի չէ անդիմադրելիօրէն չմղուիլ ինքնամփոփուելու և խորհելու Ս. Կոյսին վրայ:

Հայացուց
Մ. Ե. Ն.

— Յիսուս եղած է մարդոց մէջ եւ պիտի ըլլայ մարդոց մէջ. վասն զի զանոնք կը սիրէ: Բայց յաճախ պէտք է ծածկուիլ՝ մինակ մնալու համար: Մարդերը սիրելու համար պէտք է երբեմն թողուլ զանոնք:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻՆԻ

digitised by A.R.A.R.@